ԺԴ.

1880—1890

Ասոնց վրայ՝ Կ. Պոլսոյ դրամատէր կալուածատէրց մէջ նշանաւոր եղած են հնուց ի վեր՝ Ճանիկ Ամիրայ, Գրիգոր և Կարապետ ու Սարգիս պէյ Պալեանք, Տատեան Պօղոս պէյ, Յակոբ Բէօշէեան և որդիք, Պոլ Պետրոս, Յակոբեան եղբարք, Ֆնտըգլեան եղբարք, Եուսուֆեան (Ալիքսան և որդիք), Մանուկեանք, Տօքթ. Միքայէլ Խորասանճեան, Թոփալեանք, Բարսեղ Հալաճեան, Եսայեան Յովհաննէս ու Մկրտիչ, Տատեանք, Համբարձում Տէօքմէճեան, Բիւրքճիխանլեանք, պարտիզպանեան Աւետիս և զաւակունք, Սուրէնեան Յովհաննէս և որդիք, Տիւզեանք, Սուքիասեան՝ սեղանաւոր և ագարակատէր, Սամանճեան. ի Զմիւռնիա և յեգիպտոս՝ Սպարթալեան, Պալեօղեան, Եսայեան, Նուպարեան, Նուպար և Պօղոս փաշայի որդին, Գէորգ պէյ Երամեան ի Փարիզ և որդին Աբրահամ փաշա ի Կ. Պոլիս:

Թուղթի վաճառականներ էին Ալիքսան և Խաչիկ Խորասանճեան (ապա սեղանաւոր) Զարդարեան և Յակոբ Արշակ, որ Ղալաթիայի մատենադարանին հիմնադիրներէն է:

Եւ ասոնք մեծ մասամբ մինչև 1890, ոմանք անկէ ասդին ալ, շահաւորապէս տևեցին ու անցան՝ շատերն ազնուապետական կենցաղով. մը բաւական զատուցեալ դիրք մը բռնելով Թուրքահայ միւս հարուստներուն մէջ, մանաւանդ անոնք որ ունէին ամիրայական ծագում: